



COVID-19 համավարակի տնտեսական հետևանքները Հայաստանում և
դրանք մեղմող տնտեսական քաղաքականության թիրախները

Հարցման արդյունքների ամփոփում

Սեպտեմբեր 2020



Չարտհ Ասատրյան (ZEW, CESifo)

Վլադիմիր Ասրիյան (CREI, UPF, Barcelona GSE, CEPR)

Վահագն Զրբաշյան (UB, BEAT, CESifo)

Չարցմանը մասնակցելու հրավերը ստացած ավելի քան 80 հայ տնտեսագետներից և մասնագետներից արձագանքել և պատասխաններ են ուղարկել 31-ը: Անչափ շնորհակալ ենք բոլոր մասնակիցներին, ինչպես նաև CRRC Armenia գրասենյակին տեխնիկական աջակցության համար:

Չարցման այն մասնակիցները, ովքեր համաձայնել են հրապարակել իրենց անունները՝

Լիլիա Ալեքսանյան (ԱՁԲ)

Բագրատ Ասատրյան (ԵՊՅ)

Սամսոն Ավետյան (AICA, ՅԱՅ)

Վարդան Արամյան (Վալլեքս Խումբ)

Վարդան Բաղդասարյան (ՅԱՅ)

Լևոն Կամբեյան (Scope Ratings)

Արտաշես Կարապետյան (ESSEC)

Ռուբեն Չայրապետյան (ՅՊՏՅ)

Գագիկ Մակարյան (ՅՅ Գործատուների Չանրապետական Միություն / ՅՅ Չանրային Խորհուրդ)

Չեղինե Մանասյան (ՅՌԿԿ-Չայաստան)

Արմինե Մանուկյան (ՅԲ)

Աշոտ Մկրտչյան (ՅՅ ԿԲ)

Արմեն Նուրբեկյան (ՅՅ ԿԲ)

Ահարոն Չիլինգարյան

Էդվարդ Սանդոյան (ՅՌՅ)

Ներածություն

COVID-19 համավարակը տնտեսական անկման պատճառ է դարձել Հայաստանում և այլուր: Մարտ և ապրիլ ամիսներին Հայաստանի Հանրապետության կառավարությունը մտցրեց մարդկանց տեղաշարժի խիստ սահմանափակումներ՝ համավարակի տարածման տեմպը զսպելու համար: Ներկայումս Հայաստանի տնտեսությունը բախվում է ներքին ու արտաքին պահանջարկի անկման, մատակարարման շղթաների խափանումների և մի շարք այլ խնդիրների հետ: Տնտեսական անկում է գրանցվել տնտեսության բոլոր ճյուղերում: Որոշ ճյուղերում այս անկումը ավելի խորն է: Հայաստանի Հանրապետության կառավարությունը այս խնդիրների հաղթահարումը օժանդակելու համար փորձել ու փորձում է պետական աջակցություն ցուցաբերել տնտեսական խթանիչ քաղաքականությամբ:

Դեռևս 2020թ.-ի ապրիլին Հայկական տնտեսագիտական միությունը հանդես եկավ հարցման նախաձեռնությամբ՝ ուսումնասիրելու հայ տնտեսագետների և մասնագետների կարծիքը Հայաստանի տնտեսության վրա COVID-19-ի հնարավոր ազդեցության և այդ ազդեցությունը մեղմող տնտեսական խթանիչ քաղաքականությունների վերաբերյալ:

Հարցման նպատակն է ծավալել հանրային քննարկում մի քանի կարևոր հարցերի շուրջ: Մասնավորապես, քննարկումը կառուցված է հետևյալ հիմնական թեմաների շուրջ՝


Ներածություն.....	1
Տնտեսական ընդհանուր հետևանքները	2
Տնտեսության առավել խոցելի ճյուղերը	2
Տնտեսության ճյուղերը խթանող տնտեսական քաղաքականություն	5
Սոցիալական քաղաքականություն	11
Պետական պարտք	16
Ամփոփում	18
Հարցաշար. COVID-19 համավարակի տնտեսական հետևանքները և դրանք մեղմող տնտեսական քաղաքականության թիրախները	20

Հարցումը բավականին ընդգրկուն է, և արդյունքների սույն ամփոփագիրը ամբողջությամբ չի անդրադառնում առաջադրված բոլոր հարցերին: Հարցերի բնօրինակները ներկայացված են վերջում:

Տնտեսական ընդհանուր հետևանքները

Հարցման մասնակիցների մեծ մասը կարծում է, որ Հայաստանի տնտեսության վրա COVID-19 համավարակի հնարավոր ամենաբացասական հետևանքը կարող է լինել գործազրկության աճը: Սա համահունչ է այն տեսակետի հետ, որ այս տնտեսական ցնցումը առաջնային ազդեցությունն ունի արտադրության ու մատակարարման վրա:

COVID-19 համավարակի հնարավոր ամենաբացասական հետևանքները Հայաստանի տնտեսության վրա




Մասնակիցները ակնկալում են ներքին ու արտաքին պահանջարկի անկում, ներառյալ՝ զբոսաշրջության ու հանգստի ծառայությունների պահանջարկի նվազում: Նրանք նաև ակնընկալում են անորոշության աճ ինչպես նաև մասնավոր տրանսֆերտների անկում: Մյուս կողմից, հարցման մասնակիցներից շատ քչերն են ակնկալում ֆինանսական կայունության կամ դրամի արժեզրկման հետ կապված խնդիրներ, իսկ խորը ճգնաժամային երևույթներ, ինչպիսին է օրինակ պարենամթերքի պակասը, գրեթե ոչ ոք չի ակնկալում:

Տնտեսության առավել խոցելի ճյուղերը

Հարցման մասնակիցները ակնկալում են, որ COVID-19-ի տնտեսական հետևանքները կտարբերվեն ըստ տնտեսության ճյուղի:


Տնտեսության ճյուղերը, որտեղ արտադրությունն ամենաշատն է նվազելու համավարակի պատճառով



Մասնակիցներից շատերը ակնկալում են, որ համավարակի պատճառով արտադրությունն ամենաշատը կնվազի «Հյուրանոցներ և ռեստորաններ» ճյուղում: «Առևտուր», «Շինարարություն» և «Մշակվող արդյունաբերություն» տնտեսության ճյուղերից յուրաքանչյուրը նշվել է առավել քան 10 անգամ որպես ճյուղ, որտեղ արտադրությունն ամենաշատն է նվազելու համավարակի պատճառով:


Ըստ հարցման մասնակիցների, տնտեսական ճյուղերում արտադրության նվազման հիմնական պատճառները ներքին և արտաքին պահանջարկի անկումն են, անորոշության աճը և մատակարարման ցանցերի խափանումները:

Տնտեսության այս ճյուղերում արտադրությունը կնվազի հետևյալ պատճառներով



Հարցման մասնակիցները չեն կարծում, որ արտադրական և միջանկյալ գործոնների գների բարձրացումը մեծ խնդիր է, չնայած այն հանգամանքին, որ արտադրության և տեղաշարժի սահմանափակումներն ու արգելափակումները կարող են ի վերջո հանգեցնել դրան: Առաջին հայացքից նաև թվում է, թե հարցվածները չեն կարծում, որ ձեռնարկությունների սնանկացումներն ու լուծարումները կարող են էապես նպաստել արտադրության ծավալների նվազմանը:

Տնտեսության ճյուղերում տնտեսական գործունեության անկման պատճառով առավել խոցելի խմբերն են



Հարցման մասնակիցները ամենից հաճախ նշել են, որ տնտեսության ճյուղերում տնտեսական գործունեության անկման պատճառով առավել խոցելի խմբերն են աշխատակիցները և ՓՄՁ-ները:


Տնտեսության ճյուղերը խթանող տնտեսական քաղաքականություն

Հարցման պատասխանները թույլ են տալիս ենթադրել, որ համավարակը կունենա անհամաչափ ազդեցություն տնտեսության ճյուղերի վրա: Հաշվի առնելով պետության տրամադրության տակ գտնվող ռեսուրսների սահմանափակ լինելը, տնտեսության ճյուղերը համարժեքորեն թիրախավորել կարողացող տնտեսական խթանիչ քաղաքականությունը կարող է լինել արդյունավետ:

Կարճաժամկետ կամ միջնաժամկետ հատվածում արդյունավետ տնտեսական քաղաքականությունը պետք է թիրախավորի տնտեսության այն ճյուղերը, որտեղ իր բազմարկիչ ազդեցությունը ամենամեծն է տվյալ ժամանակահատվածում: Օրինակ, արտադրական գործունեության վերաբաշխմանը բերող քաղաքականությունների համար սրանք

այս ճյուղերն են, որտեղ բազմագործոն արտադրողականությունը (multi-factor productivity) ամենամեծն է և այս ճյուղերը մատակարարման շղթաներով ամենաշատ ու ամենախորը կապերն ունեն տնտեսության մյուս ճյուղերի հետ:


Տնտեսության ճյուղերը, որոնցում կարճաժամկետ հատվածում տնտեսական խթանները կարող են ունենալ առավել բարձր բազմարկիչ ազդեցություն տնտեսության վրա (multiplier effect):



Ելնելով վերը նշվածից՝ հարցրել ենք մասնակիցների կարծիքը, թե տնտեսության որ ճյուղերում են նրանք ակնկալում, որ կարճաժամկետ հատվածում տնտեսական խթանները կունենան առավել բազմարկիչ ազդեցություն (multiplier effect): Հարցման մասնակիցները

ավելի քան 10 անգամ կշել են «Շինարարություն»-ը, «Մշակվող արդյունաբերություն»-ը, «Գյուղատնտեսություն»-ը և «Հյուրանոցներ ու ռեստորաններ»-ը:

Տնտեսության ճյուղերը, որոնցում միջնաժամկետ հատվածում տնտեսական խթանները կարող են ունենալ առավել բարձր բազմարկիչ ազդեցություն տնտեսության վրա (multiplier effect):



Հետաքրքիր է, որ հարցման մասնակիցների կարծիքը միջնաժամկետ հատվածում առավել բարձր բազմարկիչ ազդեցություն ունեցող տնտեսության ճյուղերի մասին գրեթե նույնական է կարճաժամկետ հատվածի վերաբերյալ նրանց կարծիքին: Ինչպես կարճաժամկետ հատվածում, հարցման մասնակիցները ակնկալում են, որ միջնաժամկետ հատվածում

տնտեսական խթանները կունենան առավել բարձր բազմարկիչ ազդեցություն ըստ հերթականության «Մշակվող արդյունաբերություն», «Շինարարություն», «Գյուղատնտեսություն» և «Հյուրանոցներ և ռեստորաններ» ճյուղերում:

Իհարկե պետք է ընդունել, որ սրանք բավականին բարդ և բազմակողմանի հարցեր են: Այս հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ են, օրինակ, տվյալներ, որոնցով հնարավոր է դուրս բերել բազմազործոն արտադրողականությունը տնտեսության ճյուղերում և այս ճյուղերի կապերը տնտեսության մյուս ճյուղերի հետ մատակարարման շղթաների միջոցով:

Մենք ուսումնասիրել են 2003 թվականի բուլղարական ու ինդոնեզական մուտքի և ելքի աղյուսակները: Այս երկրների ու տարեթվի ընտրությունը պայմանավորված է տվյալների սղությանբ և այդ ժամանակաշրջանում այս երկրների ու Հայաստանի տնտեսության կառուցվածքների որոշ նմանություններով: Մուտքի և ելքի այս աղյուսակները կարելի է գտնել World Input-Output Database-ում:

Ըստ այս աղյուսակների, «Շինարարություն» և «Հյուրանոցներ ու ռեստորաններ» ճյուղերի կապերը տնտեսության մյուս ճյուղերի հետ մատակարարման շղթաների միջոցով այնքան խորը չեն, որքան «Մշակվող արդյունաբերություն» և «Գյուղատնտեսություն» ճյուղերինը:

Պետք է հաշվի առնել, որ կարող են լինել այլ նկատառումներ, քան բազմազործոն արտադրողականությունն ու մատակարարման շղթաներով կապերը, ըստ որոնց տնտեսական քաղաքականության բազմարկիչ ազդեցությունը կարող է ամենամեծը լինել «Շինարարություն» տնտեսության ճյուղում և այլուր: Օրինակ, ճանապարհաշինությունը և տրանսպորտային ենթակառուցվածքների բարելավումը կարող են հանգեցնել ամբողջ տնտեսությունում մատակարարման շղթաների աշխատանքի բարելավմանը և ունենալ բազմարկիչ ազդեցություն: Դպրոցաշինությունը և ներդրումները նմանատիպ այլ հանրային բարիքներում նույնպես կարող են ունենալ բազմարկիչ ազդեցություն միջանկյալ և երկարաժամկետ հատվածում: Հարցման մասնակիցներից ոմանք նաև նշել են, որ Ռուսաստանում տնտեսական պայմանների վատթարացման պատճառով մեծ թվով սեզոնային աշխատանքային միգրանտներ կորցրել են իրենց աշխատանքը և մնացել հայրենիքում: Այս պատճառով «Շինարարություն» տնտեսության ճյուղը թիրախավորելը կարող է լինել արդյունավետ օրինակ, երբ այս ճյուղում աշխատակիցները ունեն այս ճյուղին առանձնահատուկ հմտություններ, իրենց պահանջարկը ունի մեծ բազմարկիչ ազդեցություն տնտեսությունում, և նրանց բարդ է թիրախավորելը սովորական սոցիալական օգնության ու տրանսֆերտների փաթեթներով: Համենայն դեպս, այս պատճառով «Շինարարություն» տնտեսության ճյուղի թիրախավորումը կարող է գոնե որոշ հարցեր առաջացնել: Եթե

Նպատակն է խթանել պահանջարկը, ապա գուցե ավելի ցանկալի է դա անել սոցիալական օգնության ու տրանսֆերտների փաթեթներով: Սա թույլ կտա, որ շուկան որոշի ռեսուրսների ամենարդյունավետ բաշխումը: Ըստ որոշ ուսումնասիրությունների, այս ճյուղի աշխատակիցների հմտությունները նաև շատ առանձնահատուկ չեն:


Կատարյալ տվյալները, որոնք կօգնեն խորը և համապարփակ անդրառնալ այս բարդ ու բազմակողմանի հարցերին ներառում են երկար տարիների վիճակագրություն ընկերություններում հասույթի, գների, միջանկյալ և արտադրական գործոնների քանակի ու վարձատրությունների, ներդրումների, աշխատակիցների դեմոգրաֆիայի և մասնագիտությունների, հարկերի, և այլ ընկերություններից գնումների վերաբերյալ: Դրանք նաև ընգրկում են սպառման վերաբերյալ վիճակագրություն ըստ սոցիալական ու դեմոգրաֆիական խմբերի ու տնտեսության ճյուղերի: Այսպիսի տվյալներ գոյություն ունեն սակավաթիվ զարգացած երկրներում: Մոտ ապագայում, ցանկալի է Հայաստանում ունենալ այսպիսի տվյալներ գոնե երկնիշ (2-digit) տնտեսության ճյուղերի համար: Սա կարող է լինել մի քանի տվյալների շտեմարանի ստեղծման և համակցման արդյունք: Այս շտեմարանները կարող են կրկնօրինակել World Input-Output Database-ի և EU KLEMS-ի կառուցվածքը հայկական տվյալներով և միավորել սրանք Հայաստանում աշխատուժի հետազոտության տվյալների հետ: Այսպիսի շտեմարանների ստեղծմանը միտված ներկայիս աշխատանքները շատ քաջալերելի են:

Հայցել ենք նաև մասնակիցների կարծիքը, թե կարճաժամկետ հատվածում որոնք կարող են լինել տնտեսական խթանիչ քաղաքականության լավագույն և իրագործելի գործիքները տնտեսության ճյուղերի համար: Առավել հաճախ նշված քաղաքականություններն են պետական բյուջեից հատկացումները, հարկային գործիքները և սուբսիդավորված ուղղակի կամ միջնորդավորված վարկերը: Բոլոր այս միջոցառումները կարող են օգնել, օրինակ, մեղմել իրացվելիության հետ կապված խնդիրները ՓՄՁ-ներում: Աշխատավարձերի սուբսիդիաները նույնպես կարող են օգնել մեղմել իրացվելիության հետ կապված խնդիրները: Գործազրկության ապահովագրության հետ միասին, աշխատավարձերի սուբսիդիաները կարող են նաև մեղմել գործազրկության աճն ու դրա հետ կապված խնդիրները:

Կարճաժամկետ հատվածում տնտեսական խթանիչ քաղաքականության լավագույն իրագործելի գործիքների շարքում առավել կարևորներից է համարվել ակտիվ հարկային քաղաքականությունը: Հարցման մասնակիցները կոնկրետ գործիքներից առավել նախընտրելի են համարել հարկային վճարների հետաձգումները կամ դրույքաչափերի


Ժամանակավոր նվազեցումները, ինչպես նաև նշել են հարկային գործիքների տված հնարավորությունները՝ ստեղծելու ինվեստիցիոն խթաններ և թիրախավորելու ՓՄՁ-ները:

Կարճաժամկետ հատվածում տնտեսական խթանիչ քաղաքականության լավագույն և իրագործելի գործիքները տնտեսության ճյուղերի համար



Ընդհանուր առմամբ, այս հարցերի պատասխաններից կարելի է եզրակացնել, որ հարցման մասնակիցները տեսնում են ծավալուն տնտեսական խթանիչ քաղաքականության անհրաժեշտություն միջոցառումների լայն գործիքակազմի կիրառմամբ: Նշված խթանիչ քաղաքականություններից մի քանիսը արդեն իրականացվում են Հայաստանում և ըստ նախնական տվյալների, կան հաջողության նշաններ:

Կարճաժամկետ հատվածում տնտեսական խթանիչ քաղաքականության լավագույն և իրագործելի հարկային գործիքները տնտեսության ճյուղերի համար




Սոցիալական քաղաքականություն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը բավականին արագ և համապարփակ կերպով է արձագանքել ճգնաժամին՝ ներկայացնելով սոցիալական նպաստների փաթեթ, որը բավականին մեծ է գործող համակարգի համեմատ: Հարցման մասնակիցների պատասխաններից կարելի է եզրակացնել, որ նրանք հիմնականում աջակցում են կառավարության սոցիալական նպաստների այս քաղաքականությունը:

Հարցման մասնակիցները առավել հաճախ նշել են տնտեսական ճգնաժամի հետևանքով գործազուրկ դարձածներին՝ որպես պետական օժանդակության առավել մեծ կարիք ունեցող խումբ: Սովորական պայմաններում պետական օժանդակության կարիք ունեցող հիմնական խմբերը, ինչպիսին են՝ աղքատ ու ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունները, բազմազավակ ընտանիքները և թոշակառուները, նույնպես նշվել են, սակայն ավելի հազվադեպ: Ի համեմատ գործազուրկ դարձածների, ավելի հազվադեպ են նշվել նաև սեզոնային արտագնա աշխատանքի մեկնողները:

Այս արդյունքները համահունչ են Հայաստանում եկամուտների բաշխվածությանը ըստ ՀՀ ԱՎԾ Տնային Տնտեսությունների հարցումների տվյալների: Տնային տնտեսություններում եկամուտի հիմնական աղբյուրն է աշխատավարձը: Ըստ այս տվյալների, սեզոնային արտազևա աշխատողների տրանսֆերտները և պետական նպաստները տնային տնտեսությունների եկամուտների մեծ աղբյուր չեն կազմում:

Սոցիալական խմբերը, որոնք ամենաշատը ունեն պետական օժանդակության կարիք՝ համավարակի ու դրա առաջացրած տնտեսական ցնցման հետոյանքով



Հարցման մասնակիցները հաճախ հայտնել են մտահոգությունն առ այն, որ բարդ է նույնականացնել և թիրախավորել սոցիալական օժանդակության կարիք ունեցող խմբերին, ինչպիսին են օրինակ գործազուրկ դարձած ինքնազբաղվածները և չգրանցված աշխատողները: Կարելի է ենթադրել, որ մասնավորապես այս պատճառով է, որ հարցման մասնակիցները առավել հաճախ նշել են տնտեսական խթանիչ փաթեթների չթիրախավորված ու ընդգրկուն գործիքները՝ որպես տնտեսական ճգնաժամի ազդեցությունը սոցիալական խմբերում մեղմող ամենաարդյունավետ քաղաքականության տարրեր:

Նման չթիրախավորված և ընդգրկուն գործիքները կարող են խնդրահարույց լինել: Օրինակ, ըստ նախնական գնահատականների, կառավարության Էլեկտրաէներգիայի սպառման

ուղղված սուբսիդիաները հասանելի են դարձել բնակչության մոտ 90%-ին, այլ ոչ թե համավարակից առավել տուժած կամ գոնե համեմատաբար աղքատ տնային տնտեսություններին: Թիրախավորումը ավելի արդյունավետ դարձնելու համար, հարցվածների մի մասը առաջարկում է հավելյալ աշխատանքներ կազմակերպել տվյալների հավաքագրման ոլորտում, ինչպես նաև փորձել ավելի ակտիվորեն օգտագործել տեղական ինքնակառավարման մարմինների տրամադրած գործիքները:

Տնտեսական խթանիչ փաթեթների գործիքներ, որոնք մոտ ապագայում ամենաարդյունավետը կմեղմեն տնտեսական անկման բացասական ազդեցությունը սոցիալական խմբերի համար




Ցնցումներ ֆինանսական ոլորտում

Ֆինանսական ոլորտը հատուկ ուշադրության կարիք ունի հատկապես տնտեսական անկման պարագայում քանի-որ խնդիրները այս ոլորտում կարող են խորացնել անկումը՝ առաջ բերելով, օրինակ, իրացվելիություն հետ կապված խնդիրներ տնտեսության իրական հատվածում:


Ելնելով վերը նշվածից՝ հայցել ենք հարցման մասնակիցների կարծիքը, թե որքան հավանական է, որ ներկայիս տնտեսական ճգնաժամը դառնա ֆինանսական ոլորտում խափանումների պատճառ : Այս հարցի պատասխաններից կարելի է ենթադրել, որ առկա է մեծ անորոշություն: Սա հավանաբար արտացոլում է այն հանգամանքը, որ, ինչպես քննարկված է վերևում, հարցման մասնակիցները հազվադեպ են նշել «ֆինանսական գործունեություն» տնտեսական ճյուղը առավել խոցելի ճյուղերի խմբում և ֆինանսական անկայունությունը՝ որպես COVID-19 համավարակի հնարավոր ամենաբացասական հետևանք: Սա կարող է նաև արտացոլել այն, որ առկա է մեծ անորոշություն կապված համավարակի և համաշխարհային տնտեսության հետագա զարգացումների հետ:

Այս համավարակը կդառնա ֆինանսական ոլորտում խափանումների պատճառ Հայաստանում




Հարցման մասնակիցները առավել հաճախ նշել են, որ ֆինանսական ոլորտի հիմնական ռիսկերը կապված են ժամկետանց վարկերի և վարկառուների սնանկացումների հետ: Փոխարժեքի անկումը, կապիտալի փախուստը, իրացվելիության անկումը և ճեղքվածքի մեծացումը նույնպես նշվել են որպես այս ոլորտում ռիսկերի պատճառներ: Սա թույլ է տալիս եզրակացնել, որ ֆինանսական ոլորտում ռիսկերը բավականին լայնաշերտ են և ընդգրկում են ինչպես բանկերի ակտիվները, այնպես էլ նրանց պարտավորությունները:

Հայաստանում ֆինանսական ոլորտում ամենամեծ ռիսկերի աղբյուրները



Վերոնշյալ հարցերի պատասխաններից և մեր հարցման մասնակիցների լրացուցիչ մեկնաբանություններից ընդհանուր տպավորությունն այն է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը և, մասնավորապես, Կենտրոնական բանկը ունեն բավարար միջոցներ և տնտեսական քաղաքականության գործիքներ ֆինանսական ոլորտում իրավիճակը վերահսկելի պահելու համար:

Տնտեսական քաղաքականության ամենաարդյունավետ գործիքները, որոնք կօգնեն մեղմել ֆինանսական հատվածում ցնցումների բացասական հետևանքները




Պետական պարտք

Նախորդ պատասխաններից կարելի է եզրակացնել, որ հարցման մասնակիցները կարծում են, որ կառավարությունը պետք է ագրեսիվորեն միջամտի տնտեսությանը խթանիչ գործողություններով: Բնականաբար, հարց է առաջացնում, թե արդյոք Հայաստանի Հանրապետության կառավարությունն ունի նման հարկաբյուջետային միջոցներ: Այս համատեքստում հարկ է նշել, որ, ըստ ԱՄՀ-ի տվյալների, Հայաստանի արտաքին պետական պարտքը բավականին մեծ է այլ զարգացող շուկայական տնտեսությունների համեմատ և ներկայումս ակնկալվում է դրա շարունակական աճ:

Հարցման մասնակիցների պատասխանները թույլ են տալիս ենթադրել, որ առկա են պետական պարտքի կայունության հետ կապված բազմաթիվ ռիսկեր: Առավել հիշատակած ռիսկերն են հարկային եկամուտների անկումը, ՀՆԱ-ի անկումը, պետական ծախսերի աճը և փոխարժեքի տատանումները: Սա, ընդհանուր առմամբ, արտացոլում է այն փաստը, որ համավարակը դարձել է ճգնաժամի պատճառ ինչպես տեղական տնտեսության բազում ոլորտներում, այնպես էլ համաշխարհային տնտեսությունում: Այս ճգնաժամի միջնաժամկետ հետևանքների վերաբերյալ դեռևս գոյություն ունի էական անորոշություն:


Պետական պարտքի կայունության հետ կապված ամենամեծ ռիսկերը Հայաստանում



Հայցել ենք նաև հարցման մասնակիցների կարծիքը, թե որքան լրացուցիչ վարկային բեռ կարող է Հայաստանի Հանրապետության կառավարությունը վերցնել մինչ պետական պարտքի անկայունության գոտի մտնելը: Այս հարցի կապակցությամբ առկա են էական տարաձայնություններ, որն ակնհայտ էր: Տարաձայնությունները կարող են արտացոլել այն

հանգամանքը, որ չափազանց դժվար է ճշգրիտ կանխատեսել համաճարակի ազդեցությունը ՉՆԱ-ի, հարկային եկամուտների, փոխարժեքների և միջազգային տոկոսադրույքների վրա:


ՉՆԱ-ի նկատմամբ ներկայիս մոտ 55%-ից որքա՞ն ավելի շատ պետական պարտք կարող է Հայաստանը ունենալ նախքան պարտքը կդառնա անկայուն



Հարցման մասնակիցները կարծում են, որ տնտեսական միջամտությունները և խթանները ֆինանսավորելուց առաջացած լրացուցիչ պարտքը ֆինանսավորելու տարբերակներն են միջազգային հաստատությունները և ներքին ու արտաքին շուկաները:

Հաշվի առնելով ներքին շուկաների ներկայիս փոքր չափը, կարելի է եզրակացնել, որ ցանկալի է, որ կառավարությունը հայթայթի անհրաժեշտ միջոցները միջազգային կազմակերպություններից և անհրաժեշտության դեպքում թողարկի պարտատոմսեր:

Ո՞ր աղբյուրներից պետք է ՀՀ կառավարությունը ֆինանսավորի լրացուցիչ պարտքը:



Ամփոփում

Հարցման մասնակիցներից շատերը ակնկալում են, որ COVID-19 համավարակի ամենաբացասական հետևանքը Հայաստանի տնտեսության վրա գործազրկության և անորոշության աճն է, ինչպես նաև ապրանքների և ժամանցի ծառայությունների ներքին և արտաքին պահանջարկի անկումը: Հարցվածները կարծում են, որ տնտեսության ճյուղերը, որտեղ արտադրությունը ամենաշատը կնվազի համավարակի պատճառով, այն ճյուղերն են, որտեղ տնտեսական խթանները ունեն առավելագույն բազմապատկիչ ազդեցություն կարճաժամկետ և միջնաժամկետ հատվածներում, բացառությամբ «Առևտուր» տնտեսական ճյուղի: Այս ճյուղերն են՝ «Գյուղատնտեսություն», «Մշակվող արդյունաբերություն», «Հյուրանոցներ և ռեստորաններ» և «Շինարարություն»:

Հարցվածները առավելապես նշել են, որ տնտեսության այս ճյուղերում կարճաժամկետ հատվածում տնտեսական խթանիչ քաղաքականության լավագույն և իրագործելի գործիքներն են պետբյուջեից հատկացումները, սուբսիդավորված վարկերը և հարկերի վճարումների հետաձգումը: Ընդհանուր առմամբ, հարցման մասնակիցները տեսնում են ծավալուն տնտեսական խթանիչ քաղաքականության անհրաժեշտություն՝ ֆիսկալ բայց նաև այլ միջոցառումների լայն գործիքակազմի կիրառմամբ:

Հարցման մասնակիցները կարծում են, որ տնտեսության ճյուղերում արտադրության նվազման պատճառով հիմնական խոցելի խմբերն են աշխատակիցները և ՓՄՁ-ները: Մյուս կողմից, չգրանցված աշխատակիցները, ինչպես նաև ընկերությունների սեփականատերերը հազվադեպ են նշվել որպես խոցելի խմբեր:

Ընդհանուր առմամբ, հարցվածները ունեն բարձր սպասումներ պետությունից սոցիալական ապահովման առնչությամբ: Չնայած այս մեծ ակնկալիքներին, սոցիալական ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները այնքան էլ պարզ չեն: Առկա են նաև մտահոգություններ սոցիալական քաղաքականության՝ անհրաժեշտ խմբերին թիրախավորել չկարողանալու հետ կապված:

Չնայած Հայաստանում ֆինանսական ոլորտի աճող կարևորությանը, հարցման մասնակիցներից շատերը, կարծես, այնքան էլ անհանգստացած չեն ոլորտում հնարավոր խափանումների վերաբերյալ: Համեմայն դեպս, նրանց պատասխաններում կա որոշակի բնական անորոշություն, որը պայմանավորված է համաճարակի զարգացման և այս ոլորտի վրա դրա ազդեցության հետ:

Չնայած պետությունից՝ խթանիչ ակտիվ քաղաքականության չափառանց բարձր սպասումների, հարցվածներից շատերը մտահոգված են Հայաստանի պետական պարտքի

կայունությամբ: Պարզ է, որ պետական պարտքն Էականորեն կաճի համաճարակի հետ կապված պետական ծախսերի պատճառով: Չնայած ներկայումս Հայաստանի հարկաբյուջետային իրավիճակը կառավարելի է թվում, իրավիճակը կարող է կտրուկ փոխվել, եթե միջևաժամկետ ու երկարաժամկետ աճի հեռանկարները վատթարանան: Այսպիսով, հարցման մասնակիցները կարծում են, որ ցանկալի է պետական պարտքը ֆինանսավորել որքան հնարավոր է միջազգային հաստատությունների օգնությամբ:

Հարցաշար. COVID-19 համավարակի տնտեսական հետևանքները և դրանք մեղմող տնտեսական քաղաքականության թիրախները

Տնտեսական ընդհանուր հետևանքներ

1. Նշեք COVID-19 համավարակի հնարավոր 3 ամենաբացասական հետևանքները Հայաստանի տնտեսության վրա:

- Արտահանման անկում
- Ներքին պահանջարկի անկում
- Ֆինանսական անկայունություն
- Վարկերի հասանելիության նվազում
- Գործազրկության աճ
- Միջանկյալ և կապիտալ արտադրական գործոնների պակասուրդ
- Ձեռնարկությունների լուծարումներ
- Անորոշության աճ
- Մասնավոր տրանսֆերտների անկում
- Պարենամթերքի պակաս
- Չբուսաշրջության անկում
- Դրամի արժեզրկում
- Այլ (խնդրում ենք նշել)

Տնտեսության առավել խոցելի ճյուղերը

2. Նշեք ու դասակարգեք տնտեսության 3 ճյուղեր, որտեղ արտադրությունը ամենաշատն է նվազելու համավարակի պատճառով:

- Գյուղատնտեսություն. որսորդություն և անտառային տնտեսություն. ձկնորսություն և ձկնաբուծություն (A-tB)
- Հանքագործական արդյունաբերություն (C)
- Մշակող արդյունաբերություն (D)
- Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում (E)
- Շինարարություն (F)
- Առևտուր. ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում (G)
- Հյուրանոցներ և ռեստորաններ (H)
- Տրանսպորտ և կապ (I)
- Ֆինանսական գործունեություն (J)
- Անշարժ գույքի հետ կապված գործառնություններ. վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում (K)
- Պետական կառավարում (L)
- Կրթություն (M)
- Առողջապահություն և սոցիալական ծառայությունների մատուցում (N)
- Այլ կոմունալ, սոցիալական և անհատական ծառայությունների մատուցում (O-P)

3. Տնտեսության այս ճյուղում արտադրությունը կնվազի հետևյալ պատճառներով: Խնդրում ենք նշել առավելագույնը 3 պատճառ:

Այս հարցը կրկնվում է 2-րդ հարցում նշված յուրաքանչյուր ճյուղի համար:

- Արտաքին պահանջարկի անկում
- Ներքին պահանջարկի անկում
- Վարկավորման ծավալների կրճատում
- Ձեռնարկությունների սնանկացումներ և լուծարումներ
- Արտադրական գործոնների և միջանկյալ գործոնների (factor and intermediate inputs) գների բարձրացում

- Մատակարարման շղթաների խափանումներ (disruptions in supply chains)
- Արտադրական գործունեության օգտագործման նվազում (lower utilization of inputs)
- Անորոշության աճ
- Այլ (խնդրում ենք նշել)

Հակիրճ պարզաբանեք ձեր պատասխանը (առավելագույնը 100 բառ):

4. Որո՞նք են տնտեսության այս ճյուղում տնտեսական գործունեության անկման պատճառով առավել խոցելի խմբերը: Խնդրում ենք նշել 1 խումբ:

Այս հարցը կրկնվելում է 2-րդ հարցում նշված յուրաքանչյուր ճյուղի համար:

- Խոշոր ձեռնարկություններ
- ՓՄՁ-ներ
- Ընկերության սեփականատերեր
- Աշխատակիցներ
- Ինքնազբաղվածներ
- Չգրանցված ձեռնարկություններ կամ աշխատակիցներ
- Այլ (խնդրում ենք նշել)

Հակիրճ պարզաբանեք ձեր պատասխանը (առավելագույնը 100 բառ):

Տնտեսության ճյուղերը խթանող տնտեսական քաղաքականություն

5. Նշեք տնտեսության 3 ճյուղեր, որոնցում կարճաժամկետ հատվածում տնտեսական խթանները կարող են ունենալ առավել բարձր բազմարկիչ ազդեցություն տնտեսության վրա (multiplier effect): Խնդրում ենք, դասակարգել ճյուղերը ըստ բազմարկիչ ազդեցության:

- Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն, ձկնորսություն և ձկնաբուծություն (A+B)
- Հանքագործական արդյունաբերություն (C)
- Մշակող արդյունաբերություն (D)
- Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում (E)
- Շինարարություն (F)
- Առևտուր, ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում (G)
- Հյուրանոցներ և ռեստորաններ (H)
- Տրանսպորտ և կապ (I)
- Ֆինանսական գործունեություն (J)
- Անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպառողների ծառայությունների մատուցում (K)
- Պետական կառավարում (L)
- Կրթություն (M)
- Առողջապահություն և սոցիալական ծառայությունների մատուցում (N)
- Այլ կոմունալ, սոցիալական և անհատական ծառայությունների մատուցում (O-P)

6. Որո՞նք են կարճաժամկետ հատվածում տնտեսական խթանիչ քաղաքականության լավագույն և իրագործելի գործիքները:

Այս հարցը կրկնվում է 5-րդ հարցում նշված յուրաքանչյուր ճյուղի համար:

- Սուբսիդավորված ուղղակի վարկեր
- Սուբսիդավորված վարկեր բանկերի միջոցով
- Պետական երաշխիքներ
- Պետբյուջեից հատկացումներ
- Գործազրկության ապահովագրություն
- Աշխատավարձի սուբսիդիաներ
- Տոկոսադրույքների իջեցում

- Պետական գնումներ
- Հարկային գործիքներ (տես նաև հաջորդ հարցը)
- Այլ (խնդրում ենք նշել)

Հակիրճ պարզաբանեք ձեր պատասխանը (առավելագույնը 100 բառ):

7. Որո՞նք են հարկային քաղաքականության լավագույն և իրագործելի գործիքները:

Այս հարցը կրկնվում է 5-րդ հարցում նշված յուրաքանչյուր ճյուղի համար:

- Հարկերի վճարումների հետաձգում
- Հարկային դրույքաչափերի ժամանակավոր իջեցում
- Ինվեստիցիոն խթանների ներդրում (օրինակ՝ արագացված ամորտիզացիա),
- Հարկային վարչարարության ժամանակավոր թուլացում
- Հարկային համաներում
- Փոքր և միջին ձեռնարկություններ թիրախավորում (օրինակ՝ շրջանառության հարկի միջոցով)
- Հարկային քաղաքականությունը պետք է սահմանափակվի արդար կերպով հարկեր հավաքելով
- Այլ (խնդրում ենք նշել)

8. Նշեք տնտեսության 3 ճյուղեր, որոնցում միջնաժամկետ հատվածում տնտեսական խթանները կարող են ունենալ առավել բարձր բազմարկիչ ազդեցություն տնտեսության վրա (multiplier effect): Խնդրում ենք, դասակարգել ճյուղերը ըստ բազմարկիչ ազդեցության:

- Գյուղատնտեսություն. որսորդություն և անտառային տնտեսություն. ձկնորսություն և ձկնաբուծություն (AtB)
- Հանքագործական արդյունաբերություն (C)
- Մշակող արդյունաբերություն (D)
- Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում (E)
- Շինարարություն (F)
- Առևտուր. ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում (G)
- Հյուրանոցներ և ռեստորաններ (H)
- Տրանսպորտ և կապ (I)
- Ֆինանսական գործունեություն (J)
- Անշարժ գույքի հետ կապված գործառնություններ. վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում (K)
- Պետական կառավարում (L)
- Կրթություն (M)
- Առողջապահություն և սոցիալական ծառայությունների մատուցում (N)
- Այլ կոմունալ, սոցիալական և անհատական ծառայությունների մատուցում (O-P)

9. Որո՞նք են խոշոր արտահանողների համար ստեղծված անբարենպաստ պայմանները մեղմող քաղաքականության առավել արդյունավետ գործիքները (առավելագույնը 100 բառ):

10. Կարո՞ղ եք արդյոք նշել զբոսաշրջության ոլորտում պահանջարկը խթանող քաղաքականության առավել արդյունավետ գործիքներ (առավելագույնը 100 բառ):

Սոցիալական Զաղաքականություն

11. Նշեք 3 սոցիալական խմբեր, որոնք ամենաշատը ունեն պետական օժանդակության կարիք համավարակի ու դրա առաջացրած տնտեսական ցնցման հետևանքով: Խնդրում ենք դասակարգել այս խմբերը ըստ պետական օժանդակություն ստանալու դեպքում տնտեսության վրա բազմարկիչ ազդեցության (multiplier effect):

- Թոշակառուներ
- Աղքատ և ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններ

- Ներկայիս տնտեսական ցնցման հետևանքով գործազուրկ դարձածներ
- Բազմազավակ ընտանիքներ
- Գյուղացիական տնտեսություններ
- Սեզոնային արտազնա աշխատանքի մեկնողներ
- Ինքնազբաղվածներ
- Փախստականներ
- Այլ (խնդրում ենք նշել)

12. Նշեք տնտեսական խթանիչ փաթեթների մինչև 3 գործիքներ, որոնք մոտ ապագայում ամենաարդյունավետը կմեղմեն տնտեսական անկման բացասական ազդեցությունը ըստ սոցիալական խմբի:

Այս հարցը կրկնվում է 11-րդ հարցում նշված յուրաքանչյուր խմբի համար:

- Սոցիալական նպաստների ներկա համակարգում մեծացնել նպաստների չափը
- Սոցիալական նպաստների ներկա համակարգում ընդարձակել նպաստառուների շրջանակը
- Դրամական նպաստի փոխարեն կիրառել պարենային օգնություն
- Տրամադրել անտոկոս վարկեր ֆիզիկական անձանց
- Թույլատրել վարկային պարտավորությունների կատարումների հետաձգում
- Հայտարարել ժամկետանց վարկերի ընդհանուր համաներում
- Եկամտահարկի և գույքահարկի մեղմացում
- Կոմունալ վճարների թեթևացում
- Ընդլայնել գործազրկության նպաստառուների շրջանակը
- Տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրել ուղղահայաց դրամաշնորհներ՝ տեղի բնակչության սոցիալական օժանդակության նպատակով
- Համընդհանուր բազային եկամուտ (universal basic income)
- Գների կառավարում ու կտրոնների համակարգ (price controls and rationing)
- Այլ (խնդրում ենք նշել)

Հակիրճ պարզաբանեք ձեր պատասխանը (առավելագույնը 100 բառ):

13. Վարչարարության հետ կապված խնդիրների, ինչպես նաև չգրանցված գործարարության առկայության պայմաններում որոշ տնային տնտեսություններ հաճախ հայտնվում են ՀՀ պետական մարմինների տեսադաշտից դուրս: Որո՞նք են առավել տուժած սոցիալական խմբերը համակարգված կերպով նույնականացնելու և նրանց օժանդակելու լավագույն միջոցները (առավելագույնը 200 բառ):

Ցնցումներ ֆինանսական ոլորտում

14. Որքանո՞վ է հավանական, որ այս համավարակը կդառնա ֆինանսական ոլորտում խափանումների պատճառ Հայաստանում:

- Այն չի կարող դառնալ ֆինանսական ոլորտում խափանումների պատճառ
- Հավանական է
- Շատ հավանական է

15. Որո՞նք են Հայաստանում ֆինանսական ոլորտում ամենամեծ ռիսկերի աղբյուրները:

- Փոխարժեքի անկում
- Ժամկետանց վարկեր (Non-performing loans)
- Վարկառուների սնանկացումներ
- Իրացվելիության անկում և ճեքվածքի մեծացում (Liquidity shortages)
- Կապիտալի փախուստ (Capital/deposit flight)
- Այլ (խնդրում ենք նշել)

Հակիրճ պարզաբանեք ձեր պատասխանը (առավելագույնը 100 բառ):

16. Որո՞նք են տնտեսական քաղաքականության ամենաարդյունավետ գործիքները, որոնք կօգնեն մեղմել ֆինանսական հատվածում ցնցումների բացասական հետևանքները (դրանց առկայության պարագայում):

- Դրամավարկային քաղաքականության ավանդական միջոցների կիրառում (Conventional monetary policy)
- Դրամավարկային քաղաքականության արտակարգ միջոցների կիրառում (օր.՝ ակտիվների գնումներ, վարկային սուբսիդիաներ)
- Միջամտություններ փոխարժեքի շուկայում
- Կապիտալի վերահսկողություն (Capital controls)
- Պետական երաշխիքներ սնանկացումների դեմ (Bailout guarantees)
- Մակրոպրոդեյնցիալ գործիքների կիրառում
- Այլ (խնդրում ենք նշել)

Հակիրճ պարզաբանեք ձեր պատասխանը (առավելագույնը 100 բառ):

Պետական պարտք

17. Որո՞նք են պետական պարտքի կայունության հետ կապված ամենամեծ ռիսկերը Հայաստանում:

- Փոխարժեքի տատանումներ
- Պետական պարտատոմսերի տոկոսադրույքի աճ
- Հարկային եկամուտների անկում
- ՀՆԱ-ի անկում
- Պետական ծախսերի աճ
- Բարդություններ կապված նոր վարկեր ներգրավելու հետ
- Բանկային համակարգի ճգնաժամ
- Այլ (խնդրում ենք նշել)

Հակիրճ պարզաբանեք ձեր պատասխանը (առավելագույնը 100 բառ):

18. ՀՆԱ-ի նկատմամբ ներկայիս մոտ 55%-ից որքա՞ն ավելի շատ պետական պարտք կարող է Հայաստանը ունենալ նախքան պարտքը կդառնա անկայուն:

- 70%
- 90%
- 110%
- Համավարակի առաջացրած ցնցումը պետական պարտքի ներկայիս մակարդակը ինքնին կդարձնի անկայուն:
- Պետական պարտքի անկայունության մասին պետք չէ մտահոգվել՝ կարելի պարտքի սպասարկումից հրաժարվել:
- Այլ (խնդրում ենք նշել)

Հակիրճ պարզաբանեք ձեր պատասխանը (առավելագույնը 100 բառ):

19. Ո՞ր աղբյուրներից պետք է ՀՀ կառավարությունը ֆինանսավորի լրացուցիչ պարտքը: (խնդրում ենք դասակարգել, եթե ընտրել եք մեկից ավելի տարբերակ):

- Ներքին շուկաներից
- Արտաքին շուկաներից
- Միջազգային հաստատություններից (օրինակ՝ ԱՄՅ)
- Հարկերի բարձրացումից
- ՀՀ կենտրոնական բանկից
- Այլ (խնդրում ենք նշել)

Հակիրճ պարզաբանեք ձեր պատասխանը (առավելագույնը 100 բառ):

Ամփոփիչ հարց

20. Ի՞նչ էք կարծում, ճգնաժամի մեջ կա՞ մի հնարավորություն, որը կառավարությունը կարող է օգտագործել տնտեսական զարգացման համար: Եթե այո, ապա ինչպե՞ս (օրինակ՝ խթանել SS կամ առողջապահական ոլորտը, նախաձեռնել կառուցվածքային բարեփոխումներ):

Չակիրճ պարզաբանեք ձեր պատասխանը (առավելագույնը 100 բառ):